Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ «Օրգանական և
դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական
կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ
Ս.Գասպարյան
«12» հունիսի 2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Երևանի պետական համալսարանի Ֆարմացիայի ինստիտուտի հայցորդ Հովհաննես Վաչագանի Ղազարյանի՝ «Էֆլորնիթին–Արմենիկում» դեղային համադրության ազդեցությունը վերքային բորբոքային պրոցեսի վրա» ԺԵ.00.01 – «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ:

Վերքերի վնասվածքային ինֆեկցիայի խնդիրը մնում է ժամանակակից կլինիկական բժշկության ամենահրատապ խնդիրներից մեկը, հատկապես հակաբիոտիկների նկատմամբ կայունության արագ աճի և բորբոքային ախտածագման բարդության աճող համատեքստում:

Չնայած կլինիկական և փորձարարական ուսումնասիրությունների զգալի թվին, դեռևս չկա միասնական հայեցակարգ վերքերի բուժման արմատական և պալիատիվ մոտեցումների վերաբերյալ: Այս առումով, հատկապես հետաքրքրություն են ներկայացնում այլընտրանքային մոտեցումները, որոնք ուղղված են ոչ թե հարուցիչների անմիջական ոչնչացմանը, այլ դրանց նյութափոխանակության ուղիների մոդուլացմանը: Այդպիսի ուղիներից մեկը ալիֆատիկ պոլիամինների՝ միկրոօրգանիզմների աճի, բազմացման և թաղանթային կայունության համար անհրաժեշտ նյութերի սինթեզի արգելակումն է:

Վերոնշյալի հիման վրա հեղինակը առաջարկում է և փորձարարականորեն ուսումնասիրել է նոր դեղամիջոցային կազմ՝ «Էֆլորնիթին-Արմենիկում», որը պարունակում է L– դիֆտորմետիլօրնիտին (ԴՖՄՕ):

Դեղամիջոցային կազմը մշակվել է «Արփիմեդ» ՍՊԸ-ում (ք. Աբովյան, ՀՀ) և Մ.Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի հետազոտական կենտրոնում (ք. Երևան, ՀՀ):

Խառը վերքերի վարակների դեմ դրա արդյունավետությունը հաստատվել է դեղագործական և մորֆոֆունկցիոնալ մեթոդների վերլուծությամբ: Հետևաբար, այս

ուսումնասիրության **արդիականությունը** կայանում է բարդ վերքերի վարակների բուժման նորարարական մոտեցման մշակման մեջ՝ կայուն միկրոօրգանիզմների նյութափոխանակության ակտիվությունը զսպելու և տեղային կիրառման համար օրիգինալ դեղաձև ստեղծելու մեջ, որը կարող է արագացնել վերքերի մաքրումը և հյուսվածքների վերականգնումը:

Ուսումնասիրության նպատակը: Հեղինակն իր առջև նպատակն է դրել անցկացնել համապարփակ (ֆարմակոկինետիկ, ձևաբանական, ցիտոլոգիական, իմունոֆլուորեսցենտային և բակտերիոսկոպիկ) ուսումնասիրություններ առնետների փորձարարականորեն առաջացած աերոբ վերքերի և շների դերմատոմիկոզային վերքերի վերաբերյալ՝ օգտագործելով «Էֆլորնիթին-Արմենիկում» բուժիչ կազմը:

Հաշվի առնելով նշված նպատակը, հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

1. Ֆարմակոկինետիկ և ֆարմակոդինամիկական ուսումնասիրությունների անցկացում՝ որոշել իոնացված յոդի ակտիվությունը, որը Armenicum-ի մաս է կազմում:
2. Վերքի թարախային կազմի քանակական ցիտոլոգիական ուսումնասիրությունների անցկացում՝ մակրոֆագերի, լեյկոցիտների և լիմֆոցիտների կառուցվածքային փոփոխությունները որոշելու համար:
3. Բակտերիոսկոպիկ մեթոդների կիրառմամբ (ներկում Azure II-eozin-ով և ֆտորքրոմացում ակրիդին նարնջագույնով) որոշել վերքի ֆագոցիտների և լիմֆոցիտների կառուցվածքային փոփոխությունները այլն, թվով 5 խնդիրներ:

Գիտական նորույթը կայանում է նրանում, որ վերքերի բուժման ժամանակ ցուցաբերվել է ռացիոնալ գիտական և մեթոդաբանական մոտեցում, որը հիմնված է ներբակտերիալ և ներսնկային պոլիամին-կախյալ նյութափոխանակության ճնշման վրա, քանի որ տեղում պահպանվող շատ ռեզիդենտ միկրոօրգանիզմներ իրենց կենսական գործառույթների և վերարտադրության համար պահանջում են ալիֆատիկ պոլիամինների սինթեզ:

Ուսումնասիրության գործնական նշանակությունը: Համալիր հետազոտության արդյունքում Հ.Ղազարյանն առաջարկում է մաշկի վերքերի բուժման համար նոր բուժական կազմ, որն է «Էֆլորնիթին Արմենիկում»: Կազմը մշակվել է «Արփիմեդ» ՍՊԸ-ում և Մ.Հերացու անվան ԵՊԲՀ-ի հետազոտական կենտրոնում, դեղագործական արտադրության պայմանների խիստ պահպանման պայմաններում՝ համաձայն գործող միջազգային պահանջների և ստանդարտների:

Աշխատանքի նախնական գրախոսություն: Աշխատանքը նախնական գրախոսություն է ստացել Գիտական համակարգող խորհրդի կողմից և ներկայացվել է ԵՊՀ-ի Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդին:

Ատենախոսությունը գրված է գրագետ ռուսերենով, շարադրված նյութի ծավալը ներկայացված է 148 տպագրական էջում՝ համապատասխան ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի

կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին: Այն բաղկացած է հետևյալ բաժիններից՝ ներածություն, գրական ակնարկ (5 ենթագլուխ), հետազոտության նյութը և մեթոդները (7 ենթագլուխ), գլուխ 3՝ ֆարմակոկինետիկական հետազոտության արդյունքները և դրանց քննարկումը (4 ենթագլուխ), գլուխ 4՝ մորֆոֆունկցիոնալ հետազոտություններ (3 ենթագլուխ), եզրակացություններ, գլուխ 5՝ «Էֆլորնիտին – Արմենիկում»-ի ազդեցությունը շների դերմատոնիկոզի վրա, օգտագործված գրականության ցանկ, որը ներառում է 202 աղբյուր: Ստացված արդյունքները լուսաբանված են 24 նկարների, 13 աղյուսակների միջոցով:

Ատենախոսն ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել է անհրաժեշտ քանակությամբ համաշխարհային գրականություն և կատարել դրանց համեմատական վերլուծություն: Վերլուծելով ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ կենսա–բժշկագիտության, բժշկական քիմիայի և ինովացիոն վնասվածքաբանության վերջին ձեռքբերումներն ու արժեքավոր աշխատանքները, հեղինակը տրամաբանորեն անցում է կատարել սեփական հետազոտությունների իրականացմանը, հիմնավորելով աշխատանքի արդիականությունը և կարևորությունը ժամանակակից դեղագործության ոլորտում: Ատենախոսության թեմայով հրատարակվել է ութ գիտական հոդված:

Հետազոտությունների նյութեր և մեթոդներ գլխում բերված տվյալները ընթերցողին թույլ են տալիս միանգամից պատկերացում կազմել աշխատանքի ծավալի և օգտագործած մեթոդական հնարքների մասին: Հ.Ղազարյանն օգտվել է ինչպես դասական, այնպես էլ բժշկակենսաբանական ժամանակակից մեթոդներից, որոնք են՝

- վերքերի բորբոքային պրոցեսների մոդելավորում,
- մորֆոմետրիական մեթոդներ,
- ֆարմակոկինետիկ հետազոտություններ,
- բջջաբանական հետազոտություններ,
- բակտերիոսկոպիական հետազոտություններ,
- ընդհանուր մորֆոլոգիական հետազոտություններ,
- իմունոմորֆոլոգիական հետազոտություններ և այլն:

Հետազոտական մեթոդները ժամանակակից են, համապատասխանում են առաջադրված խնդիրներին: Վիճակագրական վերլուծությունը կատարվել է GraphPad PRISM ծրագրի միջոցով (տարբերակ 2.0, 1996; GraphPad Software, Սան Դիեգո, ԱՄՆ): Էֆլորնիթին քսուքից և «Էֆլորնիթին-Արմենիկում»-ի խառնուրդից արտազատված DFMO-ի դեղագործական պրոֆիլների միջև ժամանակի տարբերությունների վիճակագրական նշանակությունը գնահատվել է վարիացիայի երկկողմանի միջ/ներսի վերլուծության միջոցով, որտեղ փոխազդեցության ազդեցությունը ցույց է տալիս երկու դեղաչափերի միջև եղած ժամանակի ընթացքի տարբեր ցուցանիշները:

«Հետազոտությունների արդյունքներ և քննարկում» գլխում մանրակրկիտ նկարագրվում են այն բոլոր երևույթները, որոնք գրանցվել են հեղինակի կողմից փորձարարական պայմաններում: Հեղինակը հետազոտությունները տրամաբանորեն տարանջատել է մի քանի ենթագլուխների, որով պարզեցրել և ավելի հասկանալի է դարձրել կատարված հետազոտությունների էությունը: Բնութագրելով այս բաժինը, գտնում եմ, որ անիմաստ է կրկնել աշխատանքի բովանդակությունը, որի մասին արդեն խոսվել է: Ցանկանում եմ միայն նշել, որ ներկայացվող աշխատանքում արտացոլված են հեղինակի հիմնական մտահղացումները: Հեղինակի կողմից լուսաբանվել են հետազոտության հիմնական դրույթները, որոշակի է հեղինակի դիրքորոշումը այս կամ այն երևույթը գնահատելիս, ընգրկել է լայնածավալ ինֆորմացիա՝ բացատրելու համար նրանց ծագումը: Բերված բոլոր նկարները և գծապատկերները հիմնականում որակյալ են և ակնառու արտացոլում են նկարագրված պրոցեսների էությունը: Աշխատանքն առավել արժեքավոր են դարձնում նրա կողմից բերված մորֆոլոգիական, հիստոքիմիական և իմունոհիստոքիմիական հետազոտությունները, որոնց միջոցով տեսանելիորեն հաստատում է իր բերված տվյալների հավաստիությունը:

Օգտվելով ժամանակակից լուսային և լյումենեսցենտային միկրոսկոպիայի հնարավորություններից, հեղինակը գնահատում է բորբոքային պրոցեսների ընթացքը տարբեր ստադիաներում, լեյկոցիտների, լիմֆոցիտների, իմունոկոմպենտենտ բջիջների բնութագիրը փորձի տարբեր էտապներում և այլն: Էքսուդատում բակտերիոսկոպիկ, փափուկ հյուսվածքներում վերքի փոփոխությունների դինամիկան դիտարկելով, գնահատում է փորձարկվող դեղաքսուքի ռեգեներացիայի աստիճանը փորձի տարբեր ժամանակահատվածներում:

Հետաքրքրություն է առաջացնում հյուսվածքներում ֆիբրոնեկտինի և ֆիբրոբլաստների բութագիրը ռեպարացիայի տարբեր փուլերում, լյումինեսցենցիայի ժամանակ: Կարդալով այս գլուխը, հստակ պատկերացում ենք կազմում հեղինակի բարձր պրոֆեսիոնալիզմի մասին, որն արտահայտված է հետազոտության առարկայի ազատ տիրապետմամբ: Հ.Ղազարյանն օգտագործում է ոչ միայն տրավմատոլոգիային և կոմբուստոլոգիային վերաբերվող արտասահմանյան գրականություն, այլև խառը դիսցիպլիններ (բիոքիմիա, ֆիզքիմիա, պաթֆիզիոլոգիա և այլն), հետազոտական մտածողության հստակ տրամաբանությամբ, որը մի անգամ ևս հաստատում է հետազոտողի բարձր էրուդիցիայի մասին: Հեղինակն ապացուցում է, որ իր կողմից առաջարկած «Էֆլորնիթին–Արմենիկում»–ի դեղաքսուքն ունի կոմպլեքս ազդեցություն դերմատոմիկոզով վարակված շների վրա, ճնշելով պոլիամին կախյալ պաթոգենների աճը: Հաճելիորեն զարմացնում է այն, որ հեղինակը յուրաքանչյուր գլուխ վերլուծելուց հետո, այն ընդհանրացնում է եզրակացություններով:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով Հ.Վ.Ղազարյանի կողմից իրականացված աշխատանքը, կարևորությունը և նշանակությունը, այնուհանդերձ հարկ ենք համարում ատենախոսի ուշադրությունը հրավիրել հետևյալ հարցերին.

1. Ինչպե՞ս բացատրել 460մգ/կգ էֆլորնիթինի և 5.1մգ/կգ Արմենիկումի հարաբերակցությունը:

2. Ժամանակի հետ ԴՖՄՕ-ի քանակը պակասում է, ինչո՞վ բացատրել դա:

3. Ինչպե՞ս բացատրել, որ աղյուսակ 10-ում լիմֆոցիտների քանակությունը ստուգիչ խմբում 5-րդ օրը ավելացել է՝ դառնալով (53,2±3,54), իսկ (ДФМО-Арменикум)-ի դեպքում հակառակն է՝ (40,4±4)-ից իջնում է (9,0±2,1):

4. Ցանկալի կլիներ, որ որոշ միկրոֆոտոներ բերվեին մեծ խոշորացումներով, որպեսզի ավելի ինֆորմատիվ լինեն:

5. Դեղաքսուքներին վերաբերվող ի՞նչ նախակլինիկական հետազոտություններ են արվել:

6. Ձեր հետազոտություններում կա՞ նպատակ որոշել դեղաքսուքի մաշկային գրգռողականության հատկությունները:

Բերված հարցերը և դիտողությունները կրում են խորհրդատվական բնույթ և բոլորովին չեն նսեմացնում ներկայացված աշխատանքի արժեքը:

Եզրակացություն: Հեղինակի կողմից կատարված աշխատանքը արդիական է, պարունակում է արժեքավոր եզրակացություններ, որոնք տալիս են աշխատանքին մեծ գիտագործնական նշանակություն: Ատենախոսությունն իրականացնելիս ատենախոսը ցուցաբերել է դիտարկվող հարցերի իմացություն, խնդիրները ձևակերպելու և լուծելու մասնագիտական պատրաստվածություն և վերլուծության բարձր մակարդակ: Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված աշխատանքները արտացոլում են ատենախոսությունում առկա հիմնական դրույթները: Ներկայացված ատենախոսությունում գիտական դրույթները և եզրակացությունները, ինչպես նաև թեմայի հիմնավորումը քննարկված են բավարար աստիճանով: Հետազոտության արդյունքները հավաստի են, քանի որ դրանք հիմնված են ընդունված ժամանակակից մեթոդների կիրառմամբ հավաքագրված տվյալների վերլուծության վրա:

Հովհաննես Վաչագանի Ղազարյանի՝ «Էֆլորնիթին–Արմենիկում» դեղային համադրության ազդեցությունը վերքային բորբոքային պրոցեսի վրա» ԺԵ.00.01 – «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ներկայացված ատենախոսությունը ըստ իր արդիականության, հետազոտման մեթոդների մակարդակի, ստացված արդյունքների նորարարության, եզրահանգումների և գիտագործնական նշանակության համապատասխանում է ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը լիովին

արժանի է ԺԵ.00.01–«Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի գիտատեխնիկական խորհրդի թ.8 նիստում առ 12.06.2026 թ.:

Քննարկմանը մասնակցել են ք.գ.թ. Հ.Սարգսյանը, ք.գ.դ. Ա.Հարությունյանը, ք.գ.դ. Ս.Գասպարյանը, ք.գ.թ. Շ.Դաշյանը, կ.գ.դ. Ռ.Պարոնիկյանը, ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, ք.գ.դ., պրոֆ. Գ.Դանագուլյանը:

ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ ՆՕՔԻ-ի Դեղաբանության և պաթոֆիզիոլոգիայի
լաբորատորիայի վարիչ, կ.գ.թ. Հ.Գասպարյան

ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ
գիտքարտուղար, կ.գ.թ. Լ.Ներսեսյան